

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅԵՐԸ ԴԱՐՁԵԱԼ

ԳՈՐԾԱԴՈՒԼԻ ԿԸ ԴԻՄԵՆ

Իր տեղեկութիւնները քաղելով «Ղարաբաղի կոմիտէ»ի անդամ Համբարձում Գալստեանէն, Ֆրանսական կոմիտէի գործակալութիւնը Մոսկուայէն կը հաղորդէ թէ Արցախի հայերը դարձեալ գործադուլի դիմեցին թիկունք անդնելու համար իրենց երեսփոխաններուն որոշումներուն պահանջելով 21 Սեպտեմբերին հաստատուած մասնակի բաժանարարին վերացումը:

Ատրպէյճանի հողատարութեան տակ դռնուող ինքնապար այս մարզին երեսփոխանները մարզ՝ որուն 75 առ հարիւրը հայեր են, Նոյեմբեր 4ի իրենց նիստին առաջարկած ին փոփոխութիւններ սահմանադրութեան մէջ, պահանջելով աւելի լայն լիազօրութիւններ ինքնավար մարզերու համար: Անոնք կը յայտնէին նաեւ թէ կապուած կը մնան իրենց իմնական պահանջին, որ է՝ կցուիլ Հայաստանին:

Փետրուարէն ի վեր Արցախի հայերը երեք անգամ գործադուլի դիմած էին: Այս վերջին գործադուլը պիտի տեւէ մէկ շաբաթ միայն, բայց վերանորոգելի, եթէ իրենց պահանջները չընդունուին: Անոնք Հոկտեմբերի կէսերուն վերջ տուած էին գործադուլի մը, որ տեւած էր մէկուկէս ամիս: